գումարները, համապատասխանաբար, 100.000 ՀՀ դրամի և 200.000 ՀՀ դրամի չափերով, ուստի հայցի և բողոքի բավարարման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից հօգուտ «Այյունեթվորքս» ՍՊ ընկերության պետք է բռնագանձել ընդհանուր 300.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Մնացած մասով դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալ պատճառաբանությունների և եզրահանգումների հիման վրա Վերաքննիչ դատարանը՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ, 381-րդ, 386-րդ և 387-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

Վերաքննիչ բողոքը բավարարել: Թիվ **ԵԴ2/3258/02/25** քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի **03.06.2025** թվականի վճիռը բեկանել և փոփոխել հետևյալ կերպ.

Հայցը բավարարել.

Անվավեր ճանաչել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների բավարարման համար հայտարարված ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-24/6 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի մարտի 18-ին, ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 7-րդ արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով կայացրած որոշումը՝ ՊԵԿԲՄԽԾՁԲ-24/6 ծածկագրով բաց մրցույթի մասնակիցների հայտերի ոչ գնային չափանիշներին գնահատական տալու վերաբերյալ, ինչպես նաև նույն արձանագրության 3-րդ կետի 1-ին ենթակետով կայացրած որոշումը՝ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)՝ «Դանիամ» ՍՊԸ-ին և «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ, պարտավորեցնելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեին կատարել ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-24/6 ծածկագրով բաց մրցույթի մասնակիցների հայտերի ոչ գնային չափանիշների նոր գնահատում, հաշվի առնելով սույն որոշման պատճառաբանությունները և հիմնավորումները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեից հօգուտ «Այյունեթվորքս» ՍՊ ընկերության բռնագանձել 300.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմում և վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքերի գումար:

Մնացած մասով դատական ծախսերի հարցն առաջին և վերաքննիչ ատյաններում համարել լուծված:

Որոշումը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով հրապարակման պահից տասնհինգօրյա ժամկետում:

Նախագահող դատավոր՝ **Հարություն Ենոքյան**

Դատավորներ՝ **Կարեն Համբարձումյան**

Լիլիթ Սարգսյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am